

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2024Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	8
3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ.....	10
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ.....	13
5. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՔՈՎԻԴ-19-ի համավարակի, ռուս-ուկրաինական և այլ հակամարտությունների, մատակարարման շղթաների խաթարման և այլ պատճառներով արձանագրված բացասական զարգացումներից հետո համաշխարհային տնտեսությունը փորձում է հնարավորինս վերականգնվել:

2024 թվականի ինն ամիսների արդյունքներով ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճը գտնվել է դրական տիրույթում: Ռուսաստանի Դաշնությունում հունվար-սեպտեմբեր ամիսներին տնտեսական աճը միջինում կազմել է 4.1%, Չինաստանում՝ 4.9%, ԱՄՆ-ում՝ 2.9%՝ իսկ Եվրագոտում՝ 0.7%:

Ռուս-ուկրաինական հակամարտության արտաժին դրական ազդեցությունը թեև զգալիորեն թուլացել է, սակայն շարունակում է դրական ներգործություն ունենալ ՀՀ տնտեսության վրա: 2023թ. չորրորդ եռամսյակում ի հայտ եկավ այդ հակամարտության հետ կապված նոր արտաժին դրական գործոն՝ ոսկու վերաարտահանումը, որի բարենպաստ ազդեցությունը շարունակվեց նաև 2024թ. առաջին կեսին: **Սակայն այս գործոնի ազդեցությունը ևս ներկայումս զգալիորեն նվազել է, և այդ պարագայում ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպն ապրիլ ամսից սկսած ամսեամիս դանդաղում է:** Հունվար-սեպտեմբերին գրանցվել է տնտեսական ակտիվության 8.7% աճ, որն առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների, առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 3.0, 2.7 և 2.3 տոկոսային կետ: Շինարարության և գյուղատնտեսության ճյուղերի աճերը ևս նպաստել են տնտեսական ակտիվությանը:

Արդյունաբերության՝ դեռևս նախորդ տարվա նոյեմբերից սկիզբ առած բարձր աճի տեմպերն ապրիլից սկսել են կտրուկ դանդաղել՝ հիմնականում պայմանավորված ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրության աճի տեմպերի դանդաղմամբ: Հունվար-սեպտեմբեր ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 12.6%՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 12.6 տոկոսային կետ):

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթաճյուղը նվազել է՝ հակազդելով արդյունաբերության ճյուղի աճին (բացասական նպաստումը՝ 1.5 տոկոսային կետ):

Առանց «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղը դիտարկելու ստացվում է, որ արդյունաբերության ոլորտը հունվար-սեպտեմբերին անկում է ապրել 0.4%-ով:

2024 թվականի հունվար-սեպտեմբերին *գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության* համախառն արտադրանքն աճել է 2.0%-ով: Դա հիմնականում պայմանավորված է բուսաբուծության աճով (նպաստումը՝ 1.0 տոկոսային կետ): Անասնաբուծությունը և ձկնորսությունը ևս աճել են՝ նպաստելով գյուղատնտեսության աճին:

Շինարարության ոլորտի 15.9% աճը հիմնականում բնակչության և պետական բյուջեի (այդ թվում՝ միջազգային վարկերով ֆինանսավորվող) միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճի արդյունք է (նպաստումները՝ համապատասխանաբար 10.5 և 5.5 տոկոսային կետ):

Ծառայություններն աճել են 5.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով (նպաստումը՝ 5.8 տոկոսային կետ), որն իր հերթին պայմանավորված է եղել բանկերի գործունեության աճով: Ըյուղի աճին հիմնականում բացասաբար են ազդել «տրանսպորտ» և «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղերի նվազումները (բացասական նպաստումները՝ 1.8-ական տոկոսային կետեր): «Տրանսպորտ» ենթաճյուղի նվազումն իր հերթին պայմանավորված է եղել հիմնականում օդային տրանսպորտով մատուցված ծառայությունների նվազմամբ, իսկ «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղի նվազմանը հիմնականում նպաստել է ՏՏ ենթաճյուղում մատուցված ծառայությունների նվազումը:

Առևտրի 19.5% աճն առավելապես պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 16.9 տոկոսային կետ), որն իր հերթին հիմնականում բացատրվում է մեծածախ առևտրում վերաարտահանման մարժայի մեծ դերով:

Ապրանքների և ծառայությունների *արդաշահանման* իրական ծավալներն աճել են 41.5%-ով՝ պայմանավորված արտաքին պահանջարկի, մասնավորապես՝ վերաարտահանման (հատկապես՝ ԱՄԷ) բարձր ծավալներով: *Ներմուծման* իրական ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 39.4%-ով՝ մեծապես պայմանավորված վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ:

2024 թվականի ինն ամիսներին գրանցվել է *դոլարային արդաշայտությամբ արտաքին ապրանքաշրջանառության* երկնիշ աճ: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2024 թվականի ինն ամիսներին կազմել է 23717.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով

73.5%-ով: Դոլարային արտահայտությամբ արտահանումն աճել է 2.1 անգամ՝ կազմելով 10595.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 54.2%-ով՝ կազմելով 13122.5 մլն ԱՄՆ դոլար: **Թե՛ արտահանման և թե՛ ներմուծման այդպիսի բարձր աճի տեմպերը պայմանավորված են վերաարտահանումով:**

Արտահանման աճին ամենամեծ դրական նպաստումը՝ 113.5 տոկոսային կետ, ունեցել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման գործոնով: Արտահանման աճին դրական նպաստում են ունեցել նաև «հանքահումքային արտադրանք» (1.6 տոկոսային կետով) և «բուսական ծագման արտադրանք» (0.7 տոկոսային կետով) ապրանքախմբերը: Ամենամեծ բացասական նպաստումն ունեցել են «տրանսպորտային միջոցներ» (8 տոկոսային կետ), «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (2.5 տոկոսային կետ), «քիմիական արտադրության ապրանքներ» (0.5 տոկոսային կետ) ապրանքախմբերը:

2024 թվականի ինն ամիսներին ներմուծման՝ դոլարային արտահայտությամբ ծավալների աճին ամենամեծ նպաստումը՝ 60.9 տոկոսային կետ, ունեցել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը: Դրա աճը պայմանավորված է վերաարտահանմամբ: Ներմուծման աճին նպաստել են նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «մեքենաներ և սարքավորումներ» (0.8-ական տոկոսային կետով) ապրանքախմբերը: Աճին էական բացասական նպաստում է ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախումբը, որը ներմուծման աճին հակազդել է 9 տոկոսային կետով:

Ընթացիկ տարվա մայիս ամսից և՛ արտահանման, և՛ ներմուծման աճի տեմպերը կտրուկ դանդաղել են՝ հիմնականում պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալների շեշտակի կրճատմամբ:

2024 թվականի հունվար-սեպտեմբերին վարձու աշխատողների թիվը և աշխատավարձերն աճել են: Նշված ժամանակահատվածում պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 5.4%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է 5.0%-ով՝ հիմնականում պայմանավորված առևտրի, կրթության և շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճով: Վարձու աշխատողների թվի աճին նպաստել է նաև ԼՂ բնակչության որոշ մասի՝ ՀՀ աշխատանքի շուկայում ընդգրկումը:

2024 թվականի հունվար-սեպտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է

6.6%-ով՝ կազմելով 280,256 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 9.8%-ով՝ կազմելով 217,416 դրամ, իսկ ոչ պետականում՝ 5.5%-ով և կազմել է 305,269 դրամ:

2024 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ սպառողական շուկայում առկա գնանկումային միտումները շարունակաբար մեղմվել են և փոխարինվել թույլ՝ ԿԲ թիրախային միջակայքից ներքև, գնաճային միտումներով, որի պայմաններում ԿԲ-ն շարունակաբար նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ այն սեպտեմբերին սահմանելով 7.5%: Սեպտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 0.6%, բնականոն գնաճը՝ 0.7%: Այդուհանդերձ, միջին գնաճը զրոյական է եղել: Գնանկումային զարգացումները՝ առավելապես տարվա առաջին կեսին, պայմանավորված են եղել արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ճնշումներով, դոլարի նկատմամբ դրամի արժևորման լազային ազդեցություններով և ռուբլու նկատմամբ դրսևորված արժևորմամբ, ինչպես նաև համախառն պահանջարկի որոշակի թուլացմամբ: Այնուամենայնիվ, գնանկումային ճնշումներն աստիճանաբար մարել են՝ փոխարինվելով թույլ գնաճային ազդեցություններով:

Ֆիզիկական անձանց փոխանցումները դեպի ՀՀ 2024 թվականի ինն ամիսներին դեռևս մնում են բարձր մակարդակում, սակայն նախորդ տարվա ինն ամիսների համեմատ զգալիորեն նվազել են: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով այլ երկրներից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակներով զուտ փոխանցումների ներհոսքը 2024 թվականի ինն ամիսների դրությամբ կազմել է 888 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 33.3%-ով պակաս:

ՀՀ տնտեսության վրա ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով ի հայտ եկած դրական արտաժին գործոնների բարենպաստ ազդեցությունը գնալով թուլանում է: Պատահական չէ, որ նախորդ տարվա համեմատ տնտեսական աճն էականորեն դանդաղել է: Այսպես, 2024թ. առաջին եռամսյակում այն կազմել է 6.6%՝ 2023-ի նույն ժամանակահատվածի 11.8%-ի դիմաց, երկրորդ եռամսյակում այն 6.4% է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9.3%-ի դիմաց, իսկ երրորդ եռամսյակում նախնական տվյալների համաձայն՝ 5.2% է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7.4%-ի դիմաց: Այս դանդաղումը լուրջ մտահոգության տեղիք է տալիս, քանի որ մեծ է հավանականությունը, որ այդ արտաժին գործոնների բարենպաստ ազդեցությունը մոտ ապագայում ամբողջությամբ կչեզոքանա, և տնտեսության զարգացումը կհենվի միայն աճի պոտենցիալի վրա: Իսկ այդ պարագայում պետությունից ակնկալվում է տնտեսական աճի պոտենցիալի ավելացմանը միտված արդյունավետ միջոցառումների իրականացում, ինչը հնարավոր չէ «տեղավորել» ներկայումս վարվող քաղաքականության, այդ թվում՝ հարկային

խստացումների տրամաբանության մեջ: Հիշեցնենք, որ հարկային դաշտը զգալիորեն խստացվում է դեռևս անցյալ տարվանից: Մասնավորապես, բավական լայն արձագանք է ստացել 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող նոր օրենքը, որով էապես նեղացվում է միկրոձեռնարկատիրության և շրջանառության հարկով հարկման համակարգերում ընդգրկվելու առումով թույլատրվող գործունեության տեսակների շրջանակը: Հիշյալ օրենքով գործունեության մի շարք տեսակներ (նոտարական, փաստաբանական, անշարժ գույքի միջնորդական, վարսավիրական, ավտոտեխսպասարկման և այլ ծառայություններ) «տեղափոխվում են» հարկման ընդհանուր համակարգ: Նույն օրենքով գործունեության տեսակների մեծ մասի դեպքում շրջանառության հարկի դրույքաչափը շեշտակի՝ 2-3.3 անգամ բարձրանալու է: **Այսպիսի օրենսդրական փոփոխություններն անխուսափելիորեն լուրջ խնդիրներ կհարուցեն փոքր և միջին ձեռնարկատիրության համար, մինչդեռ տնտեսական աճի պոտենցիալն ավելացնելու համար ենթադրվում է անել հակառակը՝ առավելագույնս բարենպաստ պայմաններ ստեղծել այդպիսի կազմակերպությունների համար:**

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Պետական բյուջեի եկամուտները 2024 թվականի առաջին ինն ամիսներին կազմել են 1,860.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 8.9%-ով կամ 151.9 մլրդ դրամով ավելի, ինչը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների և պետական տուրքերի աճով: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների գումարի վերադարձը, որը նախկինում նվազեցվում էր եկամտային հարկից, 2024 թվականից ձևակերպվում է որպես պետական բյուջեի ծախս (այդ նպատակով 2024թ. ինն ամիսներին հատկացվել է 49.6 մլրդ դրամ), ապա հաշվառման նախկին մոտեցումը կիրառելու դեպքում եկամուտների աճն ավելի փոքր կստացվի՝ 6%: Ընդ որում, **նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների աճի տեմպն էականորեն դանդաղել է.** հաշվարկման նախկին մոտեցումը կիրառելու դեպքում ստացվում է, որ բյուջեի եկամուտների աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 13.8%-ի համեմատ նվազել է 2.3 անգամ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Ինն ամիսների փաստացի	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,708.5	1,986.7	1,988.1	1,860.4	93.6
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,617.1	1,915.8	1,917.0	1,767.2	92.2
Պաշտոնական դրամաշնորհներ	5.9	8.4	8.4	13.1	155.9
Այլ եկամուտներ	85.6	62.5	62.7	80.1	127.7

Բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. ինն ամիսների ճշտված պլանի համեմատ թերակատարվել են 127.7 մլրդ դրամով կամ 6.4%-ով: Հարկային եկամուտների գծով թերակատարումը 7.8% է՝ 149.8 մլրդ դրամ:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. ինն ամիսների փաստացի (մլրդ դրամ)	2024թ. ինն ամիսների փաստացի (մլրդ դրամ)	2024թ. ինն ամիսները 2023թ. ինն ամիսների նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,617.1	1,767.2	109.3
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,569.8	1,710.1	108.9
ԱԱՀ	538.4	525.8	97.7
Ակցիզային հարկ	95.7	95.9	100.2
Շահութահարկ	276.5	290.4	105.0
Մաքսատուրք	54.8	55.6	101.4
Եկամտային հարկ	404.8	486.6	120.2
Շրջանառության հարկ	37.6	44.0	117.0
Սոցիալական վճար (կուրսակային կենսաթոշակի գծով)	66.7	76.7	115.0
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	42.0	75.4	179.4
Այլ հարկեր	53.2	59.7	112.2
2. Պետական տուրք	47.3	57.1	120.9

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծությունը՝ 1,767.2 մլրդ դրամ, 9.3%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից, սակայն դարձյալ հարկ է նկատի ունենալ 2024 թվականից

հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների վերադարձի՝ հարկային եկամուտներից չնվազեցնելու հանգամանքը: Հաշվարկման նախկին մոտեցումը կիրառելու (2024թ. ինն ամիսների փաստացի ցուցանիշից նշված նվազեցումը կատարելու) պարագայում աճը 6.2% է:

Ինչպես և բյուջեի ընդհանուր եկամուտների դեպքում, հարկային եկամուտների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը նույնպես կտրուկ դանդաղել է: Հարկային եկամուտների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճի տեմպի ցուցանիշը 2024թ. ինն ամիսներին ավելի քան 2.4 անգամ ցածր է, քան 2023թ. ինն ամիսներին:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության աճին ամենամեծ նպաստումը՝ 5.1 տոկոսային կետ, ունեցել է *եկամտային հարկի* 20.2% աճը: Հիպոթեքային վարկերի տոկոսների վերադարձը եկամտային հարկի մեծությունից նվազեցնելու դեպքում նպաստումը զգալիորեն ավելի փոքր կլինի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ամենամեծ նպաստումն ուներ *շահութահարկը* (աճը՝ 43.6%, նպաստումը հարկային եկամուտների աճին՝ 6.0 տոկոսային կետ), որն այս տարի նպաստումով երրորդ տեղում է (աճը՝ 5.0%, նպաստումը հարկային եկամուտների աճին՝ 0.9 տոկոսային կետ): Նպաստումով երկրորդը *բնապահպանական հարկը և բնօգտագործման վճարն* է (աճը՝ 79.4%, նպաստումը հարկային եկամուտների աճին՝ 2.1 տոկոսային կետ): Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճին դրականորեն են նպաստել նաև *սոցիալական վճարը* (աճը՝ 15.0%, նպաստումը՝ 0.6 տոկոսային կետ), *պետական տուրքը* (աճը՝ 20.9%, նպաստումը՝ 0.6 տոկոսային կետ), *շրջանառության հարկը* (աճը՝ 17.0%, նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ) և *այլ հարկերը* (աճը՝ 12.2%, նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ): *Ակցիզային հարկը և մաքսատուրքը* գրեթե զրոյական նպաստում են ունեցել: *Ավելացված արժեքի հարկի* մուտքերի 2.3%-ով նվազումը, որը ՀՀ ներմուծվող ապրանքներից ստացված մուտքերի նվազման հետևանք է, հարկային եկամուտների և պետական տուրքերի աճին հակազդել է 0.8 տոկոսային կետով:

2024 թվականի ինն ամիսների ընթացքում ստացվել են 13.1 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ ծրագրված ցուցանիշից 55.9%-ով ավելի՝ պայմանավորված շուրջ 9.6 մլրդ դրամի չնախատեսված բյուջետային աջակցության դրամաշնորհների ստացմամբ:

Նպատակային ծրագրերից 3-ի շրջանակներում նախատեսված 702 մլն դրամ ընդհանուր գումարով դրամաշնորհներն ընդհանրապես չեն ստացվել: Եվս 12 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են մասնակիորեն՝ ապահովելով 40.2% կատարողական:

2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 80.1 մլրդ դրամ՝ իննամսյա ծրագրային ցուցանիշից 27.7%-ով ավելի: Դա հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների ծրագրային ցուցանիշի գերազանցմամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների գծով մուտքերը նվազել են 6.4%-ով (5.5 մլրդ դրամով):

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,933.4 մլրդ դրամ: **Դրանք ճշտված պլանի համեմատ թերակատարվել են 13.0%-ով կամ 289.1 մլրդ դրամով: Ընդ որում, թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը:** Հիշյալ 289.1 մլրդ դրամ շեղման 57%-ն արձանագրվել է ընթացիկ ծախսերում, 43%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններում (դրանք հիմնականում կապիտալ ծախսերն են): **Ընդ որում, կապիտալ ծախսերի թերակատարման տոկոսը մի քանի անգամ գերազանցում է ընթացիկ ծախսերի թերակատարման տոկոսին.** ընթացիկ ծախսերի գծով թերակատարումը 9.1% է, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների մասով թերակատարումը՝ 29.8%: Այսինքն՝ տոկոսային արտահայտությամբ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների մասով թերակատարումը 3.3 անգամ գերազանցում է ընթացիկ ծախսերի գծով թերակատարմանը (իսկ կապիտալ ծախսերի գծով թերակատարումը 3.2 անգամ է գերազանցում ընթացիկ ծախսերի գծով թերակատարմանը):

Այս անգամ էլ թե՛ ընդհանուր, թե՛ ընթացիկ ծախսերի և թե՛ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների պլանային մեծությունները ճշտված պլանով բարձրացվել են, սակայն դրանք ոչ միայն թերակատարվել են, այլև դրանց փաստացի մեծությունները պակաս են եղել նույնիսկ նախնական պլանավորված մեծությունից: Այսինքն՝ հաստատված բյուջեի ճշգրտումն իր նպատակին չի ծառայում՝ փոխանակ, նոր իրողությունները հաշվի առնելով, դրանով փաստացի և պլանային մեծությունների միջև շեղումը նվազեցվի, այն ավելի է մեծացվել: Դա վկայում է այն մասին, որ ծախսերի պլանավորման առումով պետական կառավարման համակարգի լուրջ խնդիրները շարունակում են զգացնել տալ:

Այս տարի ևս առաջին ինն ամիսների ընթացիկ ծախսերի բուրբ բաղադրիչները թերակատարվել են ճշտված պլանի նկատմամբ: Ամենամեծ

թերակատարումը՝ 23.1% կամ 20.2 մլրդ դրամ, արձանագրվել է «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածով: Էական է նաև «այլ ծախսերի» գծով արձանագրված թերակատարումը՝ 20.6% կամ 37.4 մլրդ դրամ:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2023թ.		2024թ.		
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,633.9	2,158.1	2,222.4	1,933.4	87.0
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	1,401.7	1,799.1	1,805.7	1,640.9	90.9
<i>Աշխատանքի վարձատրություն</i>	147.5	170.8	173.2	164.2	94.8
<i>Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում</i>	123.9	132.2	87.5	67.3	76.9
<i>Տոկոսավճարներ</i>	159.2	211.1	210.9	192.3	91.1
<i>Սուբսիդիաներ</i>	105.3	139.5	137.0	131.3	95.8
<i>Դրամաշնորհներ</i>	189.0	216.1	229.2	204.2	89.1
<i>Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ</i>	501.7	686.5	785.8	737.0	93.8
<i>Այլ ծախսեր</i>	175.1	242.8	182.1	144.7	79.4
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	232.3	359.0	416.7	292.5	70.2
<i>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), այդ թվում՝</i>	238.2	369.5	427.2	303.1	70.9
<i>Շենքեր և շինություններ</i>	215.2	315.8	370.4	277.9	75.0
<i>Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում</i>	19.3	37.1	44.5	21.9	49.3
<i>Այլ հիմնական միջոցներ</i>	3.7	16.6	12.3	3.2	26.2
<i>Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</i>	-5.9	-10.5	-10.5	-10.6	101.2

Կապիտալ ծախսերի գծով ցածր կատարողականը շարունակում է մտահոգիչ մնալ. 2024թ. ինն ամիսներին ոչ ֆինանսական ակտիվների գծով

ծախսերը¹ (կապիտալ ծախսերը) թերակատարվել են 29.1%-ով կամ 124.1 մլրդ դրամով:

Կապիտալ ծախսերի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում», «Ճանապարհային ցանցի բարելավում», «Ոռոգման համակարգի առողջացում» և «Քաղաքային զարգացում» ծրագրերի ծախսերի թերակատարմամբ:

Կապիտալ ծախսերի թերակատարումը հատկապես մեծ է՝ 42.7% կամ 35.1 մլրդ դրամ, արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի (ներառյալ՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ) գծով: Ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերի գծով կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է 89.1 մլրդ դրամ կամ 25.8%: Ընդ որում, ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերի ցանկում ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերը չդիտարկելու դեպքում մնացած ծրագրերի գծով կատարողականն էապես ավելի ցածր է՝ ընդամենը 43.6%:

Այն հանգամանքը, որ կապիտալ ծախսերի թերակատարումը 3.2 անգամ մեծ է ընթացիկ ծախսերի թերակատարումից, լուրջ մտահոգության տեղիք է տալիս, քանի որ դա նշանակում է, որ կառավարությունը ոչ միայն չի կարողացել ապահովել բյուջեով պլանավորված ծախսերի իրականացումը, այլ նաև թերացել է տնտեսական աճի պոտենցիալն ավելացնելու առումով, ինչը հետագայում չի կարող բացասաբար չանդրադառնալ տնտեսության զարգացման վրա:

3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ

2024 թվականի պետական բյուջեով նախատեսվում էր ինն ամիսների ընթացքում իրականացնել 166 ծրագիր՝ 47 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում դրանց թիվը հասցվել է 171-ի, որոնցից ինն ամիսներին փաստացի միջոցներ են օգտագործվել 163-ի գծով: Ընդ որում, կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները վերաբաշխվել են: Բյուջեով նախատեսված ծրագրերի շրջանակներում պլանավորված է եղել 955 միջոցառում (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 4 միջոցառման), որոնցից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 858-ը կամ 89.8%-ը:

¹ Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի տարբերությունը:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի՝ ծրագրված ցուցանիշից 289.1 մլրդ դրամի շեղումը հիմնականում արձանագրվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) (60.7 մլրդ դրամ), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (52.9 մլրդ դրամ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (46.8 մլրդ դրամ), ՀՀ պաշտպանության (22.4 մլրդ դրամ), ՀՀ ֆինանսների նախարարության (19.8 մլրդ դրամ) և ՀՀ էկոնոմիկայի (17.2 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Այս տարվա ինն ամիսներին ևս թերակատարումներ արձանագրվել են պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված բոլոր մարմինների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով:

Ընդ որում, մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով թերակատարումը **չափազանց մեծ է**. մասնավորապես, քաղաքաշինության կոմիտեի ծրագրերի գծով ընդհանուր թերակատարումը 69.1% է, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գծով՝ 41.6%, շրջակա միջավայրի նախարարության գծով՝ 32.7%: Ցածր է նաև էկոնոմիկայի, ԿԳՄՍ և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծախսերի կատարողականը՝ համապատասխանաբար 73.6%, 74.4% և 75.9%: **Ի դեպ, 2024թ. ինն ամիսների համար նախատեսված բոլոր ծրագրերից դրամական արտահայտությամբ ամենամեծ թերակատարումն արձանագրվել է ԿԳՄՍ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի գծով՝ 39.3 մլրդ դրամ (83.7%):** Ինն ամիսների ճշտված պլանով նախատեսված 46.9 մլրդ դրամի փոխարեն կատարվել են ընդամենը 7.7 մլրդ դրամի ծախսեր: Ավելին, տարեկան ճշտված պլանով ծրագրված է, որ ծախսերը պետք է կազմեն 90.2 մլրդ դրամ: Այսինքն, նույնիսկ նախորդ տարիների «հրաշքի» կրկնման պարագայում, երբ կապիտալ ծախսերը միայն մեկ՝ չորրորդ եռամսյակում գերազանցում էին նախորդ երեք եռամսյակների գումարային ցուցանիշը, և արդյունքում տարեկան թերակատարումն էապես «մեղմվում» էր, միևնույն է, դժվար է պատկերացնել, որ այս ծրագրի գծով, տարեկան կտրվածքով, հնարավոր կլինի ապահովել ծախսերի քիչ թե շատ ընդունելի կատարողական: Իսկ դա ավելի է նյութականացնում պետական բյուջեի միջոցների շրջանակներում առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման թիրախի իրատեսականության վերաբերյալ կասկածները:

Թերակատարումները բավական մեծ են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացված երկու այլ ծրագրերի գծով.

- «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի գծով՝ 24.3% կամ 6.1 մլրդ դրամ,
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի գծով՝ 22.4% կամ 2.4 մլրդ դրամ:

Ի դեպ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող 23 ծրագրերից թերակատարում չի արձանագրվել միայն մեկում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ 2024 թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել է 21 ծրագիր, որոնց վրա ճշտված պլանով նախատեսված 219.5 մլրդ դրամի դիմաց փաստացի ծախսվել է 166.6 մլրդ դրամ:

- «Քաղաքային զարգացում» ծրագրի շրջանակներում թերակատարումը 66.8% կամ 8.1 մլրդ դրամ է:
- «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիրը թերակատարվել է 44.3%-ով կամ 9.1 մլրդ դրամով:
- «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրով թերակատարումը կազմում է 29.4% կամ 23.5 մլրդ դրամ:
- «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագիրը թերակատարվել է 23.2%-ով կամ 2.1 մլրդ դրամով:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ 2024 թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել է 10 ծրագիր, որոնց համար նախատեսված 65.3 մլրդ դրամի ծախսերը թերակատարվել են 26.4%-ով կամ 17.2 մլրդ դրամով: Մասնավորապես.

- «Ներդրումների և արտահանման խթանման» ծրագիրը թերակատարվել է 94.1%-ով կամ 4.9 մլրդ դրամով:
- 58.1% կամ 0.7 մլրդ դրամ է կազմում «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի գծով թերակատարումը:
- 55.6%-ով կամ 5.6 մլրդ դրամով թերակատարվել է «Ջրուսաշրջության զարգացման» ծրագիրը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատասխանատվությամբ 2024 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացվել է 4 ծրագիր՝ նախատեսված 5-ի փոխարեն: Նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով փաստացի կատարված ծախսերը կազմել են շուրջ 7.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 58.4%-ը: **Շեղումը հիմնականում պայմանավորված է «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» և «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացում» ծրագրերի ցածր կատարողականով՝ համապատասխանաբար 2.6% և 69.9%: Ավելին, ընդհանրապես չի կատարվել «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում» ծրագիրը: Հիշեցնենք, որ այս ծրագրի գծով 2024թ. պետական բյուջեով ինն ամսվա կտրվածքով պլանավորված էին 3.4 մլրդ դրամի ծախսեր, որոնք հետագայում ճշտված պլանով նվազեցվել են մինչև 850.5 մլն դրամ, սակայն նույնիսկ այս նվազեցված ծավալներն ընդհանրապես չեն կատարվել: Ի դեպ, ԲՏԱ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերը 2023 թվականի ինն ամիսների համեմատ նվազել են 55%-ով կամ շուրջ 9.6 մլրդ դրամով:**

2024թ. ինն ամիսներին պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված բոլոր պատասխանատու մարմինների ծրագրերի գծով արձանագրված թերակատարումները վկայում են, որ կառավարությունն այդպես էլ չի կարողանում ապահովել պետական կառավարման մարմինների կողմից պետական ծրագրերի ժամանակին և արդյունավետ իրականացումը:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 73.0 մլրդ դրամ պակասուրդով՝ ծրագրված 234.3 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 74.6 մլրդ դրամ հավելուրդի դիմաց: **Ճշտված պլանով նախատեսվածից 161.3 մլրդ դրամով փոքր պակասուրդ ձևավորվելու պատճառն այն է, որ թեև բյուջեի եկամուտների հավաքագրման մասով առկա է թերակատարում, սակայն այն շատ ավելի մեծ է ծախսերի մասով:** Բացի այդ, ցածր ցուցանիշ է արձանագրվել արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով, որոնք կազմել են 46.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 60.4%-ը:

2024 թվականի ինն ամիսների ընթացքում ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 74.2 մլրդ դրամ՝ ծրագրված 48.3 մլրդ դրամի դիմաց, որը հիմնականում

պայմանավորված է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսված 59.6 մլրդ դրամ օգտագործման փոխարեն 82.9 մլրդ դրամով ավելացմամբ:

2024 թվականի ինն ամիսներին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա նախորդ տարվա նույն ժամանակահատվածի բյուջեի հավելուրդի համեմատությամբ գնահատվում է չափավոր ընդլայնող: Հիշեցնենք, որ 2024թ. պետական բյուջեի ուղերձով նախատեսվում է, որ վարվելու է չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն²:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	-74.6	171.4	234.3	73.0	31.2
<u>Պակասուրդի ֆինանսավորումը՝</u>					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	152.6	229.7	293.2	162.5	55.4
1. Փոխառու զույր միջոցներ	284.8	244.8	244.8	236.6	96.6
2. Ֆինանսական զույր ակտիվներ	-132.2	-15.2	48.3	-74.2	-153.4
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	-227.2	-58.2	-58.9	-89.4	151.9
1. Փոխառու զույր միջոցներ	-86.8	-50.1	-51.2	-74.3	144.9
2. Ֆինանսական զույր ակտիվներ	-140.4	-8.2	-7.6	-15.1	198.9

ՀՀ պետական պարտքը (դոլարային արտահայտությամբ) 2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 12,501.5 մլն ԱՄՆ դոլար՝ ընթացիկ տարվա ինն ամիսներին աճելով 5.5%-ով (656.2 մլն ԱՄՆ դոլարով): Կառավարության պարտքը կազմել է 11,979.9 մլն ԱՄՆ դոլար՝ տարեսկզբի համեմատ աճելով 685.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 6.1%-ով: ՀՀ կենտրոնական բանկի պարտքը նույն ժամանակահատվածում նվազել է 29.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 5.3%-ով և 2024թ.

² ՀՀ կառավարության 2024 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 56, 90, 96, https://minfin.am/website/images/website/2.Uxerdz_bacatragir_2024.docx

սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել 521.6 մլն ԱՄՆ դոլար: Կառավարության պարտքի աճը պայմանավորված է ներքին պարտքի 16.1%-ով կամ 861.7 մլն ԱՄՆ դոլարով աճով: Արտաքին պարտքը նվազել է 3.0%-ով կամ 176.4 մլն ԱՄՆ դոլարով: Կառավարության պարտքի պորտֆելում շարունակում է աճել ներքին պարտքի տեսակարար կշիռը. այն նախորդ տարեվերջի համեմատ աճել է 4.5 տոկոսային կետով և սեպտեմբերի վերջի դրությամբ հասել ռեկորդային 51.8%-ի: Դա միանշանակ կավելացնի պետական պարտքի սպասարկման ծախսերը՝ ի հաշիվ այն բանի, որ ներքին պարտքը արտաքին պարտքի համեմատությամբ էապես ավելի «թանկ» պարտք է:

Աղյուսակ 5. ՀՀ պետական պարտքը

	Առ 31.12.2023թ.	Առ 30.09.2024թ.	Փոփո- խություն (%)	Տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում, առ 30.09.2024թ. (%)
(մլրդ դրամ)				
ՀՀ պետական պարտք	4,794.9	4,842.1	1.0	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	4,571.9	4,640.0	1.5	95.8
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	2,408.8	2,236.5	-7.2	46.2
- ՀՀ կառավարության ներքին պարտք	2,163.2	2,403.6	11.1	49.6
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	223.0	202.0	-9.4	4.2
(մլն ԱՄՆ դոլար)				
ՀՀ պետական պարտք	11,845.4	12,501.5	5.5	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	11,294.6	11,979.9	6.1	95.8
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	5,950.7	5,774.2	-3.0	46.2
- ՀՀ կառավարության ներքին պարտք	5,343.9	6,205.6	16.1	49.6
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	550.8	521.6	-5.3	4.2

Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ տարեվերջի համեմատ 2024թ. սեպտեմբեր ամսին նվազել է, սակայն դեռևս մնում է բարձր: Մասնավորապես, 2024թ. սեպտեմբերին առաջնային շուկայում տեղաբաշխված պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ տարեվերջի համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով՝ հասնելով 9.1%-ի: Նույն ժամանակահատվածում միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 1.0 տոկոսային կետով և կազմել 9.93%:

2024 թվականի ինն ամիսները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշների հետ համեմատելու դեպքում միջին կշռված եկամտաբերությունների նվազումը նույնպես նկատելի է: Այսպես, եթե 2023 թվականի հունվար-սեպտեմբերին տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմում էր 11.4%, ապա 2024 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 9.9%:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

- ՀՀ տնտեսության վրա ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով ի հայտ եկած դրական արտաժին գործոնների բարենպաստ ազդեցությունը զգալիորեն թուլացել է, ինչի պատճառով նաև դանդաղել է տնտեսական աճը: **Այս հանգամանքը կառավարության համար պետք է լուրջ մտահոգության պատճառ հանդիսանա, քանի որ ամենայն հավանականությամբ այդ նպաստավոր արտաժին գործոնների ազդեցությունը մոտ ապագայում ամբողջապես կչեզոքանա, և տնտեսությունը «ստիպված կլինի» զարգանալ «հենվելով» միայն աճի պոտենցիալի վրա: Իսկ այդ պարագայում պետությունից ակնկալվում է տնտեսությանն «օգնելուն» միտված արդյունավետ միջոցառումների իրականացում, մինչդեռ ներկայումս դրանք տեսանելի չեն:**

- **2024թ. ինն ամիսների ճշտված պլանի համեմատ բյուջեի ընդհանուր և հարկային եկամուտները թերակատարվել են՝ համապատասխանաբար 6.4 և 7.8 տոկոսով: Ավելին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանց աճն էականորեն դանդաղել է: Այս երևույթի վտանգավորությունը, թերևս, կառավարությունը նույնպես գիտակցում է, և, ամենայն հավանականությամբ, նաև այդ է պատճառը, որ դեռևս անցյալ տարվանից զգալիորեն խստացվում է հարկային դաշտը: Մասնավորապես, էապես նեղացվել է միկրոձեռնարկատիրության և շրջանառության հարկով հարկման համակարգերում ընդգրկվելու առումով թույլատրվող գործունեության տեսակների շրջանակը՝ գործունեության մի շարք տեսակներ «տեղափոխվել են» հարկման ընդհանուր համակարգ, ինչն անխուսափելիորեն լուրջ խնդիրներ է հարուցելու փոքր և միջին ձեռնարկատիրության համար:**

- **2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին թերակատարվել են պետական բյուջեի՝ թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը: Ընդ որում, կապիտալ ծախսերի թերակատարման տոկոսը 3.2 անգամ գերազանցում է ընթացիկ ծախսերի թերակատարման տոկոսին: Այս հանգամանքը բավական մտահոգիչ է, քանզի նշանակում է, որ կառավարությունը, բացի այն, որ չի**

կարողացել ապահովել բյուջեով պլանավորված ծախսերի կատարումը և դրանով իսկ՝ պետական ապարատի արդյունավետ գործունեությունը, այլ նաև թերացել է տնտեսական աճի պոտենցիալի ավելացմանը նպաստելու առումով, ինչը հետագայում չի կարող բացասաբար չանդրադառնալ տնտեսության զարգացման վրա:

• Ինչպես և նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, այս տարվա ինն ամիսներին նույնպես թերակատարում է արձանագրվել պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված բոլոր մարմինների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով: Ի դեպ, պետական որոշ մարմինների (օրինակ՝ քաղաքաշինության կոմիտեի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, շրջակա միջավայրի նախարարության և այլն) պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով թերակատարումը չափազանց մեծ է (մինչև 69 տոկոս): Մեծ է նաև կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով թերակատարումը: **Ի դեպ, ինն ամիսների համար պլանավորված բոլոր 171 պետական ծրագրերի մեջ դրամական արտահայտությամբ ամենամեծ թերակատարումն արձանագրվել է հենց այս նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերից մեկի՝ «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի գծով՝** ինն ամիսների ճշտված պլանով նախատեսված 46.9 մլրդ դրամի փոխարեն կատարվել են 6.1 անգամ պակաս՝ շուրջ 7.7 մլրդ դրամի ծախսեր: **Ավելին, ինն ամիսներին փաստացի կատարված ծախսերը 11.8 անգամ պակաս են ճշտված պլանով այս ծրագրի իրականացման համար նախատեսված տարեկան ծախսերի պլանային մեծությունից՝ 90.2 մլրդ դրամից:** Այս պարագայում, ավելի ու ավելի հիմնավոր են դառնում պետական բյուջեի միջոցների շրջանակներում առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման թիրախի իրատեսականության վերաբերյալ կասկածները:

Ի դեպ, որոշ ծրագրեր, որոնց կարևորությունն անհնար է թերագնահատել, կա՛մ ընդհանրապես չեն իրականացվել, կա՛մ դրանց կատարողականները շատ ցածր են: Մասնավորապես, օրինակ, «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում» ծրագիրն ընդհանրապես չի իրականացվել, իսկ «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագիրը կատարվել է ընդամենը 2.6%-ով:

• ՀՀ պետական պարտքը 2024թ. ինն ամիսներին աճել է 5.5%-ով և սեպտեմբերի 30-ի դրությամբ անցել է 12.5 մլրդ ԱՄՆ դոլարից: 6.1%-ով աճել է նաև կառավարության պարտքը, որի կառուցվածքում շարունակում է աճել ներքին պարտքի տեսակարար կշիռը. այն սեպտեմբերի վերջի դրությամբ հասել է

ռեկորդային 51.8%-ի: Դա անխուսափելիորեն կհանգեցնի պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի, քանի որ ներքին պարտքն արտաքին պարտքից անհամեմատ ավելի «թանկ» է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: